ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՓԱԽՈՒՍՏ ԷՐԳՐԻՑ

ՄԻՆԱՍՅԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Ռուբեն Մելքոնյան, Նաիրա Պողոսյան

ՓԱԽՈՒՍՏ ԷՐԳՐԻՑ

Թուրքիայից հայերի ներգաղթը Հայաստան 1920-1980 թթ.

ԵՐԵՎԱՆ
2022

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 537

Մ 537 Մելքոնյան Ռուբեն, Պողոսյան Նաիրա
Փախուստ Էրգրից: Թուրքիայից հայերի ներգաղթը Հայաստան 1920-1980 թթ. / Ռ. Մելքոնյան, Ն. Պողոսյան.- Եր.: Newmag, 2022.- 344 էջ:

Ի՞նչ եղավ այն հայերի հետ, որոնք 1915 թվականին մնացին Օսմանյան կայսրությունում: Պետական ի՞նչ քաղաքականություն էր որդեգրել Թուրքիան նրանց նկատմամբ: Ինչպե՞ս ստացվեց, որ 1920 թվականից հետո Խորհրդային Միությունն ուսումնասիրում էր Կարսի և Սևրի դաշնագրերը և լրջորեն քննարկում Կարսն ու Արդահանը Թուրքիայից հետ պահանջելու խնդիրը:

Խորհրդային Հայաստանի ներգաղթի հայտարարությունն ինչո՞ւ հայտնվեց Խորհրդային Միության և Թուրքիայի՝ պատմական դիմակայության, բայց քաղաքական նոր կարգով և մեթոդներով ձևավորվող հարաբերությունների ճիշտ մեջտեղում և ամենավտանգավոր կետում:

Գիրք, որին սպասում էին հատկապես նրանք, ովքեր նկատում էին թուրք պատմաբանների ակտիվ աշխատանքն արխիվներում: Այն արխիվներում, որտեղ հնարավոր է գտնել փաստաթղթեր ու տեղեկություններ Հայոց ցեղասպանության, փրկվածների և ժառանգների մասին: Այս անգամ արխիվներում մանրամասն և խնամքով աշխատել են երկու հայ թուրքագետներ:

Նրանք գտել և ներկայացնում են «խիստ գաղտնի» դասիչի ներքո պահված ու մինչև այս անհայտ տեղեկություններ այն հայերի մասին, որոնք բռնեցին էրգրից Հայաստան «փախուստի» ճանապարհը: Ինչու և ինչպես որոշեցին, եկան և մնացին. այս գրքում պատմում են հենց իրենք՝ Թուրքիայի հայերը և նրանց սերունդները: Ցեղասպանության տրավմայից մինչև Հայաստանում գետտոյացման գործընթաց. ինչերի միջով են անցել հայրենադարձները:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-884-66-0
Գիրքը հրատարակության է երաշխավորել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը:

Ռուբեն Մելքոնյան, Նաիրա Պողոսյան «Փախուստ Էրգրից. Թուրքիայից հայերի ներգաղթը Հայաստան 1920-1980 թթ. © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին և «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամին:

ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գիրքը հրատարակվել է «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամի «Վերաիմաստավորելով 20-րդ դարի հայոց պատմությունը» պատմագիտական դրամաշնորհով:

«Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամը ստեղծվել է 2018 թվականի փետրվարին՝ անվանի ճարտարապետ, պետական և հասարակական գործիչ Գրիգոր Հասրաթյանի և անվանի գիտնական, քաղաքագետ, պետական գործիչ Միքայել Մինասյանի հիշատակին:

Հիմնադրամի «Մինասյան» մատենաշարն աջակցում է պատմագիտական, հետազոտական նախագծերին, որոնք հնարավորություն են տալիս վերաիմաստավորել 20-րդ դարի Հայաստանի պատմությունը:

Բովանդակություն

Ներածություն 11

Գլուխ 1 Այն, ինչ կատարվեց 1920-30-ականներին, ներգաղթ էր, վերաբնակեցում, թե հայրենադարձություն 31
Գլուխ 2 Թուրքիայի հակասական քաղաքականությունը հայերի արտագաղթի նկատմամբ 43
Գլուխ 3 Թուրքիայի հայերի չիրականացած «Մեծ հայրենադարձությունը» 93
Գլուխ 4 Սիրիայով՝ հայրենիք. 1950-80-ականների ներգաղթի ուղիները 155
Գլուխ 5 Հայկական Վարթո ցեղախմբի հայրենադարձման ոդիսականը 181
Գլուխ 6 Ինտեգրման փորձեր, ճնշումներ, հիասթափություն, փախուստ 201

Վերջաբան 217

Հավելված 1 Հայերի թիվը Թուրքիայի Հանրապետությունում՝ ըստ պաշտոնական փաստաթղթերի և մարդահամարների (1920-60-ականներ) 221
Հավելված 2 Բանավոր պատմությունները՝ անցյալի «լռեցված» էջերի պահոց 229
Հավելված 3 Հարցազրույցներ 239

Երախտագիտության խոսք 287
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ 289
Լուսանկարների աղբյուրներ 307
Ծանոթագրություններ 310

Ներածություն

Համաշխարհային տնտեսական ու քաղաքական համակարգերում ներգաղթյալների դերի կարևորումն անհրաժեշտ է դարձնում ընդունող հասարակություն-ներգաղթյալներ, ներգաղթյալներ-հայրենիք կապերի, ներգաղթյալների համայնքների խնդիրների ուսումնասիրությունը: Արդեն տևական ժամանակ այս հարցերի տարբեր ասպեկտներ գտնվում են պատմագիտության, մարդաբանության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության, քաղաքագիտության ուշադրության կենտրոնում: Ներգաղթի համաշխարհային «նոր ալիքն» անմիջական ազդեցություն է թողել նաև Հայաստանի վրա: 2000-ականներին Մերձավոր Արևելքում ճգնաժամերի և պատերազմների հետևանքով հայկական գաղութների ներկայացուցիչների մի հատված ներգաղթել և մշտական բնակություն է հաստատել Հայաստանի Հանրապետությունում: Այդ հանգամանքով էլ պայմանավորված՝ ներգաղթյալների թեման Հայաստանում ևս դարձել է առավել քան արդիական՝ դիտարկվելով ժողովրդագրական փոփոխությունների, հայրենադարձության և հայապահպանության խնդիրների ծիրում:

Հայաստանի Հանրապետությունը 1920-ի նոյեմբերի 29-ին խորհրդայնացվեց, երկու տարի անց դարձավ Խորհրդային Միության հանրապետություններից մեկը: ՀԽՍՀ կառավարությունն առաջնահերթ գործ հռչակեց արևմտահայ բազմահազար գաղթականների խնդիրների լուծումը: 1921-ից սկսած՝ Խորհրդային Հայաստանի ղեկավարները կազմակեր-

պեցին տարբեր երկրներում ապաստանած և Թուրքիայում (Օսմանյան կայսրությունում) գոյատևած հայության որոշակի խմբերի ներգաղթը հայրենիք, ինչը որոշ ընդհատումներով և տարբեր ծավալներով շարունակվեց մինչև 1980-ականները: ՀԽՍՀ-ում բնակություն հաստատած ներգաղթյալ հայերը զգալիորեն ազդեցին Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական զարգացման հետագա ընթացքի վրա՝ դառնալով սոցիալ-մշակութային և քաղաքական տեղաշարժերի պատճառ կամ շարժառիթ: Հայրենադարձության խնդրի խորագիտակ մասնագետ Հովիկ Մելիքսեթյանը խորհրդային շրջանում հայերի հայրենադարձությունը բաժանում է 3 հիմնական փուլի.

1921-36 թթ.	42,286 անձ
1946-49 թթ.	89,750 անձ
1962-82 թթ.	35,920 անձ
Ընդհանուր	**167,956 հայ**[1]

Հայրենադարձության խնդրի համապատկերում քիչ է ուսումնասիրված 1923-ին հիմնադրված Թուրքիայից Խորհրդային Հայաստան ներգաղթած կամ նման ցանկություն հայտնած հայության հարցն իր առանձնահատկություններով: Թուրքահայերի հայրենադարձման առանձնահատկությունը (եթե ոչ բացառիկությունը) պայմանավորված էր մի քանի հանգամանքով. հայրենադարձության բոլոր փուլերում հայրենիք ժամանած հայության խմբերը գալիս էին իրենց համար ժամանակավոր ապաստան դար-

ձած երկրներից, մինչդեռ Թուրքիայից ժամանող հայերը լքում էին իրենց դարավոր բնակավայրը (օրինակ՝ Պոլիս-Ստամբուլը), երբեմն նաև բնօրրանը՝ պատմական Հայաստանի բնակավայրերը կամ Թուրքիայի հայաբնակ նահանգները: ՀԽՍՀ հարևան Թուրքիան սառը պատերազմի շրջանում ոչ միայն ներկայացնում էր հակասովետական բլոկը, այլև ՆԱՏՕ-ի անդամ (1952-ից) միակ երկիրն էր, որն ընդհանուր սահման ուներ ԽՍՀՄ հետ[2]: Այս հանգամանքը և ԽՍՀՄ-Թուրքիա բարդ հարաբերություններն աշխարհաքաղաքական լիցքեր էին հաղորդում Թուրքիայից հայրենադարձության կազմակերպմանը:

1921-ից ի վեր Օսմանյան կայսրությունից/Թուրքիայից ՀԽՍՀ ներգաղթի մի քանի փուլեր և ձևաչափեր են եղել: 20-րդ դարի երկրորդ կեսին արձանագրվել են նաև Թուրքիայի հայերի «կոմպակտ» խմբերի ներգաղթի փորձեր, որոնք մինչև այսօր քիչ են ուսումնասիրված, հայտնի են այդ փորձերի որոշ դրվագներ միայն: Ներգաղթի դրդող գործոնների շարքում անհրաժեշտ է դիտարկել նաև ձախակողմյան՝ սոցիալիստական գաղափարախոսության դերը: Թուրքիայի հայության շրջանում տարածված էր սոցիալիստական գաղափարախոսությունը, և գուցե նաև այդ պատճառով ՀԽՍՀ-ն ընկալվում էր որպես «ցանկալի միջավայր»: Թուրքիայից ներգաղթելու ցանկություն ունեցող հայերը գտնվել են երկու պետությունների (Թուրքիա, ԽՍՀՄ) և դրանց ամբողջատիրական համակարգերի թիրախում, ինչն ազդեցություն է ունեցել ներգաղթի ընթացքի, որոշ դեպքերում տապալման վրա: Այդ հայերը և՛ Թուրքիայում, և՛ ԽՍՀՄ-ում համարվել են կասկածելի մարդիկ: Զգուշանալով Թուրքիայում պետական

ՆԿԱՐ 1

1946-48 թթ. ներգաղթյալներին այսպես էին դիմավորում Խորհրդային Հայաստանում

և հասարակական հալածանքներից՝ գաղթելու ցանկություն հայտնածները կիսագաղտնի են պահել ԽՍՀՄ տեղափոխվելու մտադրությունը, Խորհրդային Հայաստանում էլ, բախվելով պետության ճնշումներին և երբեմն նաև հասարակական մեկուսացմանը, կրկին ստիպված են եղել հասարակության մեջ «զգուշավոր» գործելակերպ որդեգրել:

Այս գրքում ու ուսումնասիրել ենք Թուրքիայից հայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան 1920-80-ականներին, ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերություններում «ներգաղթյալների գործոնը», Թուրքիայից ներգաղթող հայերին ընդունելու գործում ԽՍՀՄ պատրաստակամության քաղաքական և աշ-

խարհաքաղաքական ենթաշերտերը, թուրքաբնակ հայերի արտագաղթի հիմնական քաղաքական ու հասարակական պատճառները, Հայաստանում հաստատված թուրքահայերի ադապտացիոն խնդիրներն ու «յուրայինների մեջ օտարի» սինդրոմը՝ թուրքահայերի մշակութային ինտեգրման և գետտոյացման միջակայքում:

Մեր ուսումնասիրությունը կարող է մի քանի նշանակություն ունենալ: Այն կարող է նպաստել 20-րդ դարի կեսին Թուրքիայի հայության շրջանում Ցեղասպանության հիշողության և թուրքական հալածանքի քաղաքականության առաջ բերած տրավմաների ասպեկտների բացահայտմանը: Հայաստանում տարբեր տարիների և այժմ էլ (մինչև արցախյան երկրորդ պատերազմը) նկատվում են միտումներ Թուրքիայից հայերի ՀՀ ներգաղթելու ուղղությամբ, և նախորդող փուլի ուսումնասիրությունը կարող է արդիական լինել նաև ժամանակակից իրողությունները, դրդիչ հանգամանքներն ընկալելու տեսանկյունից: Մասնավորապես՝ այսօրվա ներգաղթի հարցում գերիշխում են էրդողանական Թուրքիայից փախչելու, թե նախկինում իրենց ծնողների չիրականացած նպատակն իրագործելու շարժառիթները:

Խնդիրն ուսումնասիրվել է միջգիտակարգային հարթությունում՝ պատմագիտության, արևելագիտության (թուրքագիտության) և սոցիալ-մշակութային մարդաբանության մեթոդների և մոտեցումների կիրառմամբ: Ուսումնասիրության ժամանակագրական սահմանները սկսվում են 1923 թվականից, երբ պաշտոնապես հռչակվել է Թուրքիայի Հանրապետությունը, ավարտվում 1980-ականներով: Սակայն անդրադարձել ենք նաև 1923 թվականին նախորդած տարինե-